ԼՂԻՄ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

Տեղի ունեցավ արհեստակցական միությունների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի պլենում, որը քննության առավ խորհրդի մի խումբ անդամների դիմումը։

Դիմումի մեջ մասնավորապես ասվում է, որ արհմիությունների մարզային խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 11-ի որոշումը, որը հրդեհակել էր ԼՂԻՄ-ի արհմիությունների դուրս գալը արհեստակցական միությունների ադրբեջանական խորհրդի ենթակայությունից, մինչև օրս ՀԱՄԿԽ-ի կողմից չի ճանաչվել որպես մարզի արհմիությունների անդամների կամքի արտահայտություն։

Անցած ժամանակամիջոցում Ադրբեջանական ԽՍՀ-ի արհմիութենական մարմինները շարունակում էին ամեն կերպ խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի արհմիութենական մարմինների բնականոն աշխատանքին։ Դրա օրինակները բավական շատ են։ Դրանք են թե՛ սոցիալական ապահովագրության թոշակների ու նպաստների վճարման ծախսերի ծածկման համար միջոցներ տրամադրելու հետ կապված բազմամսյա քաշքշուկը, թե՛ անհրաժեշտ քանակությամբ սանատորակուրորտային ուղեգրերի հատկացմանն առնչվող հարցերի անտեսումը, թե՛ Ստեփանակերտի ճանապարհորդությունների և էքսկուրսիաների բյուրոյին ինքնուրույնություն տալու հարցի լուծման ձգձգումը և այլն։ Մեկուկես տարուց ավելի արհմիությունների մարզային կոմիտեները փաստորեն կոնկրետ օգնություն չեն ստացել հանրապետությունից։ Ավելին, Խորհրդային իշխանության տարիներին արհեստակցական միությունների ադրբեջանական խորհուրդը ինքնավար մարզում, բացի Օուշիից, չի կառուցել ոչ մի արհմիութենական օբյեկտ։

Պլենումը նշեց, որ դիմումի մեջ շարադրված փաստերը լիովին համապատասխանում են իրականությանը։ Ներկա իրավիճակում արհեստակցական միությունների ադրբեջանական խորհուրդը կորցրել է ԼՂԻՄ-ի արհմիությունները ղեկավարելու բարոյական ու քաղաքական իրավունքը։

Պլենումը որոշեց արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդին խնդրել իր արհմիութենական սպասարկման մեջ առնելու ԼՂԻՄ-ի արհմիությունները, իսկ ՀԱՄԿԽ-ին՝ քննարկելու և բավարարելու տվյալ միջնորդությունը։

Ընդառաջելով արհեստակցական միությունների մարզկոմների, շրջքաղկոմների, ընկերքնական կազմակերպությունների արհմիութենական կոմիտեների ցանկություններին, մարզի արհմիությունների խորհրդի պլենումը դիմեց ՀԱՄԿԽ-ին, խնդրելով ընթացիկ տարում ինքնավար մարզի արհմիութենական կազմակերպություններում հաշվետվություններ և ընտրություններ չանցկացնել և գործող արհմիութենական մարմինների լիազորությունները երկարաձգել մինչև ռեգիոնի իրադրության կարգավորումը։

Պլենումը ընդունեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, երկրի Մինիստրների խորհրդին և ՀԱՄԿԽ-ին ուղղված հատուկ դիմում, խնդրելով արագացնել Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի լուծումը։

Արհմիությունների մարզային խորհրդի պլենումը դիմեց նաև ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեին և հատուկ շրջանի պարետությանը, հատուկ համոզմունք հայտնելով, որ զորային ստորաբաժանումների ներկայությունը մարզի տարածքում խիստ անհրաժեշտ է ազգամիջյան հողի վրա հնարավոր ընդհարումները կանխելու համար։ Անչափ կարևոր նշանակություն է տրված աշխատավորական կոլեկտիվների, պատերազմի, կուսակցության և աշխատանքի վետերանների, ուսանող և սովորող երիտասարդության հետ զինծառայողների հանդիպումներին։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ թղթ.)

Ստեփանակերտ